



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Περικλής Περικλής

1904



Հ. ՍԵՆԿԵԻԻԶ.

19 NOV 1904

891-85

U-40

ՕՐՀՆՈՒԱԾ ԵՂԻՐ

~~8 - 82~~  
~~1 - 48~~

Թարգմ. Բար-Վան

ԻՎ. ՆԱԺԻՎԻՆ.

ՏԻՐԱՄՕՐ ՄԱԶԸ

1002  
5951

Թարգմ. Լ. Արովեանի

ԵԱ-Վ.

ՄԵՆՔ ՄԻՇՏ ԳՆՈՒՄ ԷԻՆՔ...

Թարգմ. Լ. Արովեանի

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Ցարսան Մոխես Վարդանեսի

1904

30 JUL 2013

16168

364

5

Доз. Цензурою 18 Марта, 1904 г., Тифлисъ.

# ՕՐ Հ Ն ՈՒ Ա Ծ Ե Ղ Ի Ր

(ՀՆԴԿԱԿԱՆ ԼԵԳԵՆԴ)

Մի լուսնկայ գիշեր իմաստուն ու մեծ  
Քրիշնան խոր մտածելուց յետոյ՝ ասաց.

— Ես կարծում էի, թէ մարդը աշխարհի  
ամենագեղեցիկ արարածն է. սակայն, ախսոս,  
չարաչար սխալուած եմ: Ահա առջևս գիշերա-  
յին քամու թոյլ փշելուցը մեղմիկ տառանուող  
լոտոսի մի ծաղիկ: Ո՛հ, սրբան գեղեցիկ է բո-  
լոր կենդանի էակներից: Նորա քնքոյշ ծաղկա-  
թերթերը բացուել են լուսնակի արծաթափայլ  
լուսի տակ, և իմ աչքերս չեն կարողանում հե-  
ռանալ նորանից:

— Սյն, մարդոց մէջ սորա նմանը չը կայ  
— կրկինց հառաչով:

Ապա շուտով Քրիշնան մտածեց.

— Ինչո՞ւ ես՝ տէրս, ամենակարող կամբխս ուժով չստեղծեմ մի էակ, որը լինէր մարդոց մէջ այն, ինչ լոտոսը ծաղիկների: Ստեղծուէր երկրի և մարդոց ուրախութեան համար: Լոտոս, փոխարկուիր կենդանի կուսի և կանգնիր առջև:

Եւ նոյն րոպէին, կարծես ծիծեռնակի թևով շոյուած, մեղմիկ ծփաց ալիքը, գիշերն աւելի լուսաւորուեց, լուսինն աւելի վառ փայլեց երկնքում, գիշերային կեռնեսններն սկսեցին աւելի բարձր երգել ու յանկարծ լռեցին:

Եւ ահա այդ ժամին կատարուեց հրաշքը. մեծ Քրիշնայի դիմաց կանգնեց լոտոսը մարդկային, երիտասարդ կուսի պատկերով:

Նորան տեսնելով հէնց ինքն աստուած շշմեց, շուարեց:

— Դու մինչ այժմ լճի ծաղիկ էիր, — ասաց Քրիշնան, — եղիր այսուհետեւ իմ մտքերի ծաղիկը... ու խօսիր:

Նորափթիթ կոյսը, քնքշիկ զեփիւռի հետ զգուող լոտոսի սպիտակ ծաղկաթերթերի պէս, շշնջաց:

— Տէր, դու ինձ կենդանի մի էակ դարձրիր. հիմա որտե՞ղ ես հրամայում ասլ-

րեմ: Ծաղիկ ժամանակս ծաղկաթերթերս գողգողում ու ոլորում էին քամու ամեն մի փչելուց: Ինձ սարսափեցնում էին տեղատարափ անձրևները, մրրիկները, որոտն ու կայծակը, սարսափեցնում նոյնիսկ արեւի կիզիչ ճառագայթները: Թէև հրամայեցիր ինձ մարմնաւորուել կուսի կերպարանքով, սակայն դեռ պահանջ եմ հին ընոյթս, և այժմ էլ սարսափեցնում է ինձ երկիրը և այն ամենը, ինչ գտընւում է նորա վրայ: Ո՞ւր ես հրամայում, որ ապրեմ:

Մեծ Քրիշնան ուղղեց իր իմաստուն հայեացքն աստղերին և րոպէական մտածմունքից յետոյ ասաց.

— Լեռների վագաթներին ցանկանում ես ապրել:

— Սյնտեղ ձիւն ու սառն է, տէր, վախենում եմ:

— Եթէ այդպէս է, այն ժամանակ քեզ համար լճի յատակում կը կառուցանեմ բիրեղեայ հրաշակերտ մի ապարանք:

— Զրե՞րի խորքերում ապրում են սարսափելի ձկներ և այլ հրէշներ. նոցանից վախեցնում եմ, տէր:

— Կուղեմ արդեօք անսահման անապատում ապրել:

— Օ, տէր, այնտեղ յաճախ լինում են կատաղի վոթորիկներ ու պտուտահողմեր:

— Հիմա քեզ հետ ինչպէս վարուեմ, նորափթիթ, կոյս դարձած՝ ծաղիկ: Յիշեցի. Ելթօրայի այրերում ապրում են սուրբ ճգնաւորներ... ցանկանում ես աշխարհից հեռու, այրում ապրել:

— Տէր, այնտեղ մութն է... վախենում եմ:

Քրիշնան նստեց քարի վրայ և մտախոհ գլուխը խոնարհեց ձեռների մէջ. իսկ վախից դողացող կոյսը կանգնած էր նորա առաջ:

Սյդ ժամին արևելքում բացուեց արշալոյսը և իր ճառագայթներով կամաց-կամաց լուսաւորեց երկինքն ու երկիրը, ոսկեգօծեց լճի հայելանման մակերևոյթը, բարձրագագաթ արմաւենիները և հնդեղեղները:

Գորա հետ միասին ջրերի վրայ հնչեցին վարդագոյն ճայերի, կապտագոյն կոռունկների և սպիտակ կարասների, իսկ անտառում սիրամարգների ձայները: Սյս բազմակերպ ձայների խմբին միացան մարգարտի գաղտակուրի վրայ սարքած լարերի հնչիւնները և մարդկային երգի խօսքեր:

Քրիշնան զուարթ սրտով ասաց.

— Բանաստեղծ Վայլմիկին ողջունում է արևի այգը:

Մի վայրկեանում բացուեցան լիանաները ծածկող ծիրանագոյն ծաղիկների շղթաները և լճի եզրին յայտնուեց Վայլմիկին:

Յանկարծ նազանի կուսին իր դիմաց տեսնելով՝ նա լուեց և դադարեց նուագելուց: Մարգարտի գաղտակուրը դանդաղ ցած սողաց ձեռներից, և հրաշալի տեսիլքով շուարած անշարժ կանգնել էր նա, կարծես մեծ Քրիշնայի հրամանով լճափնեայ ծառ դարձած լինէր:

Աստուած. ուրախացաւ, որ իր ստեղծած արարածով այդպէս լուռ հիանում է Վայլմիկին, և ասաց.

— Ուշքի եկ, Վայլմիկի, ու խօսիր:

Վայլմիկին արտասանեց.

...Միրում եմ...

Միայն այս խօսքը յիշեց, միայն այս խօսքը կարաց արտասանել:

Եւ ահա, Քրիշնայի զէմբը պարգուեց:

— Նազանի կոյս, — ասաց, — քեզ արժանի տեղ գտայ... Բնակուելի բանաստեղծի սրտում. Վայլմիկին նորից կրկնեց.

...Միրում եմ...

Ամենակարող Քրիշնայի զօրաւոր աստուածային կամբը ձգեց կուսին բանաստեղծի սիրտը, որը դարձրաւ աստուած բիւրեղի սլէս թափանցիկ:

Պայծառ, որպէս ամառուայ օրը, հանգիստ, որպէս հսկայ Գանգէսի ալիքը, ոտը կոխեց կոյսը իր համար նշանակուած բնակատեղին: Սակայն երբ ուշիմ նայեց բանաստեղծի սրտի խորքերը, նորա դէմքը յանկարծակի գունատուեց, շփոթմունքը ցուրտ քամու շնչի պէս պատեց նրան: Մեծ Քրիշնան այս բանի վրայ զարմացաւ:

—Մարդակերպ ծաղիկ, — հարցրեց նա, — մի՞թէ բանաստեղծի սիրտն էլ քեզ սարսափեցնում է:

—Տէր—պատասխանեց կոյսը — ի՛նչ ահռելի բնակավայր ես ընտրել ինձ համար: Այդ բնակատեղում, այդ սրտում տեսայ ես ձիւնապատ լեռնապագաթներ, սարսափելի էակներով լիքն անյատակ ծովեր և փոթորիկներով ու պրտուտահողմերով անսահման անապատներ, և Էլլօրայի մութ այրերը... և այժմ հոգիս գըրկուած է շփոթմունքով:

Բարի և իմաստուն Քրիշնան ասաց.

—Հանգարտուիր, կոյս դարձած ծաղիկ: Եթէ Վայլմիկիի սրտում թագնուած կուսական ձիւն կայ, եղիր դարնան տաք շունչ, որը կը հալեցնի նրան: Եթէ այնտեղ անյատակ ծով կայ, նորա մարգարիտն եղիր. եթէ այնտեղ դատարկ, անսահման անապատ կայ, ցանիր նորա մէջ բախտաւորութեան սերմեր, և վերջապէս, եթէ այնտեղ կան Էլլօրայի խուլ ու մութ այրերը, եղիր այդ մթութեան մէջ կենսաբեր արեգի պայծառ ճառագայթ...

Իսկ Վայլմիկին աւելացրաւ.

—Եւ օրհնուած եղիր:



## Տ Ի Ր Ա Մ Օ Ր Մ Ա Ջ Ը

Ծերունի ժերոմը, որի հետ մենք զբօսնում էինք ժընեկին մօտ մի փոքրիկ քաղաքի St. Julien անուն կանաչ հարթութեան վրայ, յանկալած կանգնեց, լայն բացեց ոտները և հարցրեց ինձ, ժպտալով իր սափրած բարի դէմքով.

— Իսկ գիտե՞ արդեօք պարոնը, թէ ևս այժմ որտեղ է:

— Սյախնըն, ինչպէս որտեղ, — հարցրի ևս զարմանքով:

Տարօրինակ ծերուկը ծիծաղեց:

— Գէ, հը, սր երկրում:

— Կարծում եմ, Ֆրանսիայում... — առայցի ես:

— Ոչ:

— Ուրեմն Ձուիցերիայում:

— Ոչ:

— Լաւ, որտեղ ուրեմն:

Սպասելով այնքան, որքան նրա կարծիքով բաւական էր հարկաւոր տպաւորութիւնն անելու, ծերունին ասաց.

— Ֆրանսիայում և Ձուիցերիայում:

Ես զարմացմամբ նրան նայեցի:

— Մի ոտս Ֆրանսիայում է, միւսը Ձուիցերիայում... պարզեց թերութիւնը, ցոյց տալով իր լայն բացած ոտները: — Տեսնո՞ւմ է պարոնը, այ, այն քարը, այն մէկն էլ... Սահմանը հէնց այդ է. ճիշտ իմ ոտների միջով է անցնում, հա, հա, հա... Բայց կարող եմ այնպէս պառկել, որ գլուխս լինի Ֆրանսիայում, իսկ ոտներս Ձուիցերիայում, կամ այնպէս, որ ոտներս Ֆրանսիայում, իսկ գլուխս Ձուիցերիայում լինին...

Եւ ծերունին նայեց վրաս, շատ գոհ իր խելացի — ինչպէս իրեն թւում էր — մտքից:

— Այ, ահաւասիկ այն, իսկ և իսկ ոտներին միջով է անցնում... կրկնեց նա, ուշադիր անտղելով հողը:

Ես էլ նայեցի նրա հաստ, փթանոց կօշիկների մէջ տեղը, անդիտակցաբար փնտռելով այն գիծը, որ ժերոմը սահման էր անուանում, բայց այնտեղ ոչ մի գիծ չկար: Երկմը-

տութեան մի տարօրինակ զգացմամբ համա-  
կուած, ես նայեցի շուրջս, այն սահմանի եր-  
կու կողմը, որի վերայ ձերոմն էր կանգնած։  
Նոյն դաշտերը, փարթամ կաղամախները, խա-  
ղողի այգիքը, ուրախատես ազարախները, նոյն  
հողը, ծաղիկները, թիթեռները, նոյն մեղու-  
ները, սարեկների արծաթահնչիւն գայլայլները  
և նոյն լորերը - բոլորը նոյնը։

Ես կրկին անգիտակցաբար վնասում էի  
աչքերով այն գիծը, բայց նորից ոչինչ չգտայ։

Սմեն մարդու կեանքում էլ լինում են բո-  
ւոյններ, երբ նա յանկարծուտ փայտոյ ճշմար-  
տութեան լուսով պատահմամբ գտնում է, որ  
ինչ բան երկար ժամանակ նա ճշմարիտ էր հա-  
մարել, ստութիւն է եղել։ Կախարդուած լինե-  
լով գոյնզգոյն բարտէզներից, աշխարհագրու-  
թեան գասաբրբերից, մաքսատներով, լրագըր-  
ներիով, գինուորների համազգեստներիով, ես  
հաւատացած էի սահմանների գոյութեան, և  
ահա այժմ ինձ պարզուեցաւ, որ նորա *ընաւ*  
*գոյութիւն չունին*, որ որոնել մի գիծ, որի  
վերայ իբր կանգնած լինէր ձերոմը, անմտու-  
թիւն է. սարգ եղաւ, որ այդ բանը չկայ։

Բայց եթէ չկայ, հապա ինչի՞ վերայ է  
կանգնած ձերոմը։ — Աչինջի։

Իսկ նա հաւատացած է, թէ մի բանի վե-  
րայ կանգնած է։

Չգիտեմ ինչու, ես շփոթուեցայ և նայե-  
ցի ձերունու վրայ։

— Հա՛, — ասաց նա, — գուարձալի է, չէ՞։

Ես փշաբաղուեցայ, ինչպէս մէկը, որ եր-  
կար ժամանակ գժանոցում ապրելուց յետոյ  
յանկարծ մի վայրկեանում առողջանում է և  
հասկանում, որ իր շուրջը բոլորը խելագար են։

— Ծիծաղելի է, ախր, չէ՞։

ձերոմը խենթ էր։

— Բարև, հարևան, — լսուեցաւ մի ձայն։

— Ա՛, բարև, հինուկ, — պատասխանեց

ձերոմը շուռ գալով։

Մեզ մօտեցաւ բարձրահասակ, կայծքարի  
պէս ամրակազմ, փրփռացող կապոյտ շար հա-  
գած մի ձերուկ։

— Ինչպէ՞ս է առողջութիւնդ, — ասաց նա,

թօթուելով ձերոմի ձեռը։

— Ինչպէս տեսնում ես, իսկ դո՛ւ։

— Փառք Աստուծոյ։

— Իսկ ես, ահա, ռուս պարոնին մեր  
վայրերն եմ ցոյց տալիս... ասաց ձերոմը...  
Այ, ասում եմ, ինչպէս է մեղանում, մի սոս  
Ձուիցերիայում է, միւսը Փրանտիայում... հա՛,  
հա՛, հա՛, ծերուկ ձերոմը ֆրանսիացի է, իսկ

ծերուկ ծակը զուլիցերացի, իսկ դաշտերը կից են:

— Այո, այո, — պատասխանեց ծակը, գըլ-  
խի շարժմամբ յարդէ գլխարկը աչքերին քաշե-  
լով, որպէսզի արևից պաշտպանէ: — Հը՛, նըս-  
տենը մի ըիչ:

Ծերերը նստեցին, ես էլ հետեցի:

— Կիրակի օրը շուկայ գնացել էիր:

— Այո, իհարկէ:

— Ե՛. ի՞նչ կայ, ի՞նչ չկայ:

Նորա սկսեցին խօսել իրենց գործերի մասին, հացահատիկների համար նոյաստաւոր եզանակի մասին, անասունների գնի մասին, և այլն: Հալաւը, լեզուն, արտասանութիւնն իսկ, բոլոր գործերը, աշխարհայեցողութիւնը, բոլորը նոյնն էին, սակայն և այնպէս «ծիր ծերումը ֆրանսիացի էր, իսկ ծակը զուլիցերացի»:

Նորա խօսակցում էին, իսկ ես լսելիայն նոցա էի նայում և շարունակ մտածում այն գծի մասին, որի վերայ կանգնած էր ծերունի ծերումը:

Իմ առաջ նստած էին և ընկերաբար շատխօսում էին երկու ծերունի: Բայց թնձ մի բան պատահի այս թխպոտ, կանաչ դաշտերից հեռու մի տեղ, իսկայն ծերամի սրբին կ'երթայ

այնտեղ, այգիների միջից երևցող ծակի ագարակն այրելու, իսկ ծակի որդիք գնտակ կ'արձակեն ծերումի որդու վրայ, կ'սպանեն նրան, մօր աչքերի առաջ կը բռնաբարեն բոյրերին, գնտակահար կ'անեն ծերունի հօրը... Եւ այդ բոլորի պատճառը: — Այն է, որ մարդիկ խելագար են, որ նորա երևակայել են, թէ իրենց բաժանում են ինչ որ գծեր, որը ձգուած են նոցա արօրատեղիների և դաշտերի միջով, երևակայել են, որ իրենք միմեանց նման մարդիկ չեն, եղբայրներ չեն, այլ թշնամի: Թէ մի լաւ նայեն նորա այն սահմանին, որը ցոյց էր տալիս ինձ ծերումը, կը տեսնեն, որ այնտեղ ոչինչ չկայ, և որ, սրբեմն, ծերունի ծակը և հարևան ծերումը իրար ոչնչացնելու ոչ մի առիթ չունին. .

Եւ յանկարծ յիշեցի ես մի պատմուածք իտալական վանքերից մինում պահուող Տիրամօր մազի մասին: Այդ մազը ամենին էլ ցոյց էր տրուում, բայց նա միայն կարող էր այն տեսնել, ով մի ծառայութիւն արած լինէր Տիրամօր: Մի անգամ այս վանքն եկաւ մի պարզամիտ կին և ազօթիւց յետոյ խնդրեց վարդապետին սրբութիւնը իրեն ցոյց տալ: Վարդապետը չստիպեց երկար խնդրել, մի տեղից ոսկեղօծ արկղ հանեց, բաց արաւ և, իբր այն-

տեղից մի բան հանելով, երկու ձեռքն էլ այնպէս բարձրացրեց, կարծես թէ մազը բռնած լինէր:

— Հը՞, տեսնում ես:

Ինչպէս էլ տնտղում էր կինը, ոչինչ չկարողացաւ տեսնել:

— Կը նշանակի անարժան ես... գնան, էլի ազօթիր...

Կինը նորից ջերմեանդուծեամբ արօթեց, կրկին դարձաւ վարդապետի մօտ, բայց, օրհն, մազը անտեսանելի էր մնում:

Սյուպէս կրկնուեցաւ մի անգամ, երկու երեք... վերջապէս վարդապետը համբերութիւնից ելաւ:

— Է՛հ, մայրիկ, դու էլ ի՛նչ ես ցանկացել, — գոչեց նա, — ես եռնոուն տարի այստեղ նստած եմ, ոչ մի անգամ չեմ տեսել այն, ինչ ցոյց եմ տալիս, իսկ դու ուզում ես մի անգամից տեսնել:

Ահա արդէն հազար տարիներ են, և մի ճարպիկ վարդապետ ձերո՞մներին ու ծակերին Տիրամօր գոյութիւն չունեցող մազն է ցոյց տալիս՝ մի չգոյ սահմանագիծ, և նորա... տեսնում են այդ, իսկ երբ վերջապէս այս տարօրինակ թաղանթը կ'ընկնի նոցա աչքերից, երբ նորա կ'ազատուին վարդապետների թով-

չութիւններից, վարդապետների, որոնք նոցա Տիրամօր մազերի ցանցով պատել են, և որոնց համար նպաստաւոր է մարդոց գծերով բաժանելը... Ե՞րբ նորա կը հասկանան, որ իրենց միջև ոչ մի գիծ հարկաւոր չէ, որ նորա եղբայրներ են, և որ նոցա յարաբերութիւնները միայն եղբայրական կարող են լինել ..

Եւ ես ուզում էի իմ կողքին հանդարտ զրուցող ձերունիներին ձայն տալ.

— Քերոմ, ծակ, տեսէք, գիծ չկայ: Զեղ խաբել են, մաքրեցէք աչերնիդ, արթնացէք:

Բայց այդ րոպէին ձեր ձերումը ոտի կանգնեց և, քորելով զօտկատեղը, ասաց.

— Բայց և այնպէս, ժամանակ է գնալու: Արտասահմանում բուռական շրջեցինք, այժմ էլ դէպի տուն... հա, հա, հա...

— Զուիցերիան տեսար, այժմ գնացէք Ֆրանսիան տեսնելու: — Ասաց ծակը:

— Սյո՛, այո՛... Մ'նաս բարև, սիրելիս...

— Յետեութիւն, սիրելի ձերոմ... Յետեութիւն, պարոն...

Ձեր ծակի հետ ձեռ թօթուցինք և օտար երկիրը թողնելով ուղևորուեցանք Ֆրանսիա, ձերոմի ազարակը, որ երևում էր յիսուն քայլ հեռու կանաչ կաղամախների և ծաղկող եղբանու մէջ:

1002  
3951



## ՄԵՆՔ ՄԻՇՏ ԳՆՈՒՄ ԷԻՆՔ...

(ՆՆՏԵԱԼԻՑ)

Մենք միշտ գնում էինք, մենք միշտ գնում էինք... Մի ինչ որ տեղ «կեցցէ» էին կանչում. հրաձգութեան ձայն էր լսում. հեռաւոր թնդանթային դարկերը հրացանների ձայնի հետ փոխէփոխ կրկնում էին. Գնտակները սուլում և ոսոստախնով գետին էին ընկնում, տանելով երբեմն իրենց հետ մեր ընկերների կեանքը... Իսկ մենք միշտ գնում էինք ու գնում... Նօսրանում էին շարքերը, ծանր հառաչելով ընկնում էին զինուորները. իսկ մեր զօրաշարքը, ոչ մի բանի չհայելով, շարունակ առաջ ու առաջ էր գնում... Երբեմն հրամանն էր լսում. «Պատնէջի վրայով... 2700... արձակել...», և մենք պառկում էինք, յաճախ կանգնած էինք արձակում, կրկին ար-

ձակում, շղթայ կազմում, արձակում էինք «դանդաղ» կամ «վրայ-վրայ», նորից շարք կազմում, նորից անհարթ, վարած ճանապարհով գնում էինք, գնում յոգնած, ջարդուած, չորացած բիմբերով:

Երբեմն դադար էինք առնում: Մեր կէսը պառկում էր, ծխում և յոգնած, այրուած, դեղին ու փոշոտ դէմքերով ընկերներս պառկում էին և անտարբեր առաջ նայում: Ոտներնիս ցաւում էին, չոր և բարակ փոշին աչքներս այրում. աւազն ատամներիս տակ զրճտում էր, ձեռքերնիս շոգից ճարճրում, իսկ զրահների կապերը ճնշում էին մեր կուրծքն ու թիկունքը: Ծանր գլուխը, ասես արճիճով լցրած, առանց որ և է մտածութեան կամ ցանկութեան, յերկիր էր խոնարհւում: Եւ մեր ամբողջ էութիւնը հանգիստ ու անդորր էր լսնդրում:

Բայց մեզ վեր էին կացնում և նորից տանում, և մենք վերջապէս յոգնածութեան և հակակրութեան այնպիսի դրութեան մէջ ընկանք, որ էյ բան չէինք զգում, երբ հանգրստութեան իսկ մասին չես ըզում մտածել: Գնալ ու գնալ, միայն գնալ... Ոտներնիս իրենք իրենց էին փոխում: Հրամանին հնազանդ ձեռներնիս բնագոմամբ կատարում էին

հարկաւոր կարգերը՝ արձակում էին, լցնում էին հրացանները, նորից արձակում, իսկ գլուխներս մէջ խուլ կերպով քայլելու չափն էր հընչում. «Մէկ, երկու, գնում ենք, գնում ենք...»

Սուաջից գնտապետն էր գնում ձիու վրայ նստած, երբեմն դաւնում էր մեզ և ինչ որ մի բան գոչում: Հնազանդելով հրամանին և ազդեցիկ ձայնին, մենք կատարում էինք պատուէրը և միշտ գնում... գնում ու գնում:

Երևում ու անցնում էին անտառակներ, և մեզ խոնաւութիւնն ու ծառերի բուրմունքն էր շրջապատում, բայց չէր զուարթացնում, այլ ստիպում էր աւելի ու աւելի շոգ և յոգնութիւն զգալ: Հեռուից ցիւղեր էին երևում, երբեմն բարձրանում էր թշնամու ձեռով այրուած գիւղի ծուխը, պտտահում դիակներ.— ամենուրեք կուռի և աւերածութեան հետքեր էին երևում:

Արևն այրում էր. կիզիչ ճառագայթներն աչք էին կուրացնում և լցնում կապարէ գլուխըս մի ինչ որ խիստ ցաւով. «Ա... ա... րնգ», հնչում էր հրամանը, և գետինը դողում հարիւրաւոր յոգնած, բռնուած ոտքերի հարուածից:

Նուազում էին շարքերը, հետզհետէ շուտ-շուտ էին ընկնում ընկերներս, տապակուելով կիզոյ ճառագայթներից: Գոռում էր հրամանատարը, յետևից հերթապահները չգիտեմ ինչ էին անում: Իսկ մենք միշտ գնում էինք ու գնում, չհամարձակուելով յետ նայիլ, կամ ծանրագին հառաչել չկարողանալով: Եւ մեր մէջ ծնւում էր մի անտարբերութիւն դէպի ամեն ինչ: Ընկածների վրայ մենք ոչ մի ուշադրութիւն չէինք դարձնում, այլ միշտ գնում ու գնում էինք...

Ս.հն, ընկաւ ձախ կողմինը: Երկու մարդ ինձնից հեռու մի ուրիշն էլ ընկաւ՝ հրիտասարդ, սևագոյն, գունատ մի գիւնուոր: Տանը թողել էր կնոջը և երեխային: Մի տարի առաջ նա եկաւ մեր գունտը իբրև նորեկ. իսկ այժմ հարկ եղաւ պատերազմ գնալու... Միտք յղացաւ, թրթռաց, խղճահարուժիւն զարթեց, բայց նորից խուլ կերպով սառեց անցաւ:

Բայց ի՞նչ պտտահեց հարեանիս... Նա երբեք է... Նրա բեղերը, մեծ, չէկ բեղերը կախուել են... երեսը կապտել է... աչքերը տարօրինակ փայլում են... գլխարկը թերուել է ծոծրակի վրայ... «Ը՛կ, էրկու... ը՛կ, էրկու...» Հրացանը ձեռից ընկնում է: Սա էլ կորաւ: Խեղճ... Ծառայութեան վերջին տարին էր:

Ինչպէս նա ուզում էր հայրենիք գնալ: Անցեալ տարի խնդրեց, որ գնայ պառաւ մօր մօտ—հայրը մեռել էր—չ[թողին... Եր համար նոր համազգեստ էր կարել տուել, բայց երևի նրանով իր մօր մօտ չէր գնալու, այլ այն աշխարհը, այն հայրենիքը, ուր «չկայ ցաւ, վիշտ ու հաւաչանք...» Իսկ պառաւը որդու փոխարէն տխուր լուր կ'ստանայ. «Արևը տուեց, նա մեռաւ, երբ մեծ ճանապարհ էր գնում...»

Գորաւ ընկերս, նրա մատին մտածելն էլ կուրաւ, յիշատակն էլ.—ամեն ինչ կորաւ, և միայն մի ձայն, նզովեալ և անկարեկիր շնչով միայն գլուխներինս մէջ խուլ հնչում էր. «Մէկ, երկու, մէկ, երկու... գնում ենք...» գնում ենք...»

Եւ չափի ներքոյ ծագում են կցկտուր մտքեր, հարցերի բեկորներ... յիշողութիւններն են արթնում և նորից փոշու մէջ գունար թափւում:

Մենք միշտ գնում էինք... Ո՛ւր և ինչնու... Ահա պայթիւններն արդէն հազիւ են լսում. գնտակները քիչ են սուլում: Միայն թնկանթներն են առաջուայ պէս օդը դրդացնում իրենց ուժգին զարկերով, կարծես մինը խոր և ծանր հառաչում է, և այդ հառաչները մեր սրտերում ցաւոտ արձագանգ են գանում:

Ո՛ւր և ինչնու... Ոչ որ մեզ շատաց—ուր: Մեզ հրամայուած է գնալ, և մենք, ահա, գնում ենք, մենք հնազանդօրէն գնում ենք:

«Մէկ... երկու... մէկ, երկու...» կարծես արթնանալով սկսում է զարկել թմբուկը:

«Ե՛յ, ոտ փոխիր... Վասիլ, ոտքի...— Բայց նա ոտ չփոխեց.— ընկաւ... Մէկ, երկու... մէկ, երկու... Միայն թէ շուտ հասնէինք, այն միայն հասնէինք...» Ի՞նչ կայ այնտեղ.— հակառակմարտ, յարձակում... Օ՛, ի՞նչ առաջներինս մահն սպասե՛լ, սէւ մահը, միայն թէ նրան շուտ հասնէինք... միայն շուտ հասնէինք... շուտ...»

Միշտ նոյն շփոթը, նոյն շարժումը:

Երեքսուր գնում է հրամանատարը: Առջևից, ետևից, աջ ու ձախից միապաղպղ, շափով, գանդազ քայլելով գնում են նոյն մարդիկ, նոյն զինուորները... Երբերը փոշապատ են. արևի տակ փայլում են սուլիները: Եւ լուսթիւն հոնգմանային սոսկալի, մեռած լուսթիւն, թմբուկը կանտնաւոր կերպով չափ է

«Մէկ, երկու... մէկ, երկու...»

Միայն հարիւրաւոր մարդկային շարքաւոր սուր սուլիները կեն-

դանի ծովը հաւասարաչափ ծածանում է այդ  
չափի համեմատ և շարժւում է, շարժւում...  
Լաուժիւնը միախառնւում է շարժման և կաշ-  
կանդում մարդոց, և նորա անդիտակ և ան-  
տարբեր գնում են, գնում... գնում...

Տարացած օդում պայծառ օդերնոյթ է ե-  
րևում. կը յայտնուի և փայլուն լինը, բայց կը  
փշի բամբին, և նա անյետ կը կորչի: Յոյրը  
նորից կը մեռնի, և յոգնած ընկերներին աչ-  
քում հազիւ վառուել սկսող կրակը կը մարի...

Մենք միշտ գնում էինք: Սրեն այրում էր,  
ջարդուած ոտքերնիս քաշ էին գալիս և ժանտ  
փոշու սիւններ կանգնեցնում, գոռում էր հրա-  
մանատարը, մեռած ընկնում էին ընկերներս,  
խակ մենք միշտ գնում էինք, մենք միշտ գնում  
էինք, անյայտ է, թէ ուր...

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՐԱԳՐԱԴԱՐԱՆ





ՀՀ Ազգային գրադարան



NL0325631

16.168

891.85

U-40